

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւր միկ ծախով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

Մանուշակաւ սողը
20 մանքիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

Գրութեանը եւ լեզ-
ւոյն խմբագրութեանը

ՄԱԿԵՂԱՔԱՆ ՀԱՐՑԸ

Եւրոպական Թուրքիոյ երեք նահանգներուն բարենորոգմանց խնդիրը դիւանագիտական տեսակետով այսօր տեսականապէս կարգադրուած պէտք է նկատել: Մուրցիոտքի համաձայնութեան հիման վրայ, Սէլանիկ, Մանասթըր և Իսկիւր նահանգներուն վարչական գործը Ռուսիոյ և Աւստրո-Հունգարիոյ կողմէ կարգուած երկու քաղաքական գործակալներու հսկողութեանը ենթարկուելէ, և ստիկանական վարչութիւնը իտալացի տի ձորձիս ղեկավարին վերին հրամանատարութեան տակ եւրոպայի սպանիստ յանձնուելէ յետոյ, այսօր ալ երկամտական բոլոր գործերը եւրոպական յանձնարարութիւնը իրաւասութեան ենթարկուեցաւ:

Թէեւ երկամտական այս նոր կարգադրութեան մանրամասնութիւնները ամբողջովին չեն հրապարակուած տակաւին, սակայն մաս առ մաս եղած յայտնութիւններէն բաւական որոշ հասկցուած է թէ, այդ երեք նահանգներուն հասոյթները նոյն նահանգներու ներքին պետքերուն գործածել որոշուած է, պայմանաւ որ աւելցածը Բ. Դրան յանձնուի, և եթէ այդ հասոյթները չը բաւեն, պակասած ալ Բ. Դրանէն առնուի: Պէտք չէ տարակուսիլ թէ՛ Մակեդոնիոյ այդ կիսաւեր դաւաճները եւրոպայիներու ձեռքով չէնցնելու, բարեկարգելու ու զարգացնելու համար հասոյթներէն բան չաւելնար, իսկ պակասելը շատ հաւանական ըլլալով, դեռ պակասները ապահովութիւն պահանջած էին Դրանէն որ պակասը հատուցանէ: Դրան առաջարկեր է որ հասոյթին պակասը մաքսին 3 առ հարիւր յաւելումով մը գոցուի, Դրան այս առաջարկութիւնը հաւանականապէս ընդունուած պիտի ըլլայ:

Երկու բառով բացատրելու համար, պէտք է ըսել թէ Մա-

կեդոնիան մեաշնորհեալ երկիր մը (էյալէթի միւսթաղա) եղաւ այսօր թուրքիոյ մէջ պետութեանց հսկողութեան և եւրոպացի պաշտօնեաներու վարչութեան տակ: Հին զուտ և անխառն կերպով թրքական բան մը եթէ մնացած է, այն ալ զինուորական բանակն է: Բայց ասոր ալ իշխանութիւնը ի մօտոյ պիտի սահմանափակուի, և զօրքերը իրենց զօրանոցներուն շըրջանակէն դուրս, երկրին ժողովուրդին վրայ իշխանութիւն ունենալէ պիտի դադրին, ինչպէս էր երբեմն Սերպիոյ մէջ, ուր թուրք զօրքը միայն բերդերը քաշուած կը սպասէր:

Մինչ Պետութեանը Մակեդոնիան խաղաղեցնելու և եւրոպական պատերազմի մը առիթ չը տալու համար այս կարգադրութիւնը կ'ընեն, ասորին Մակեդոնոպոլսկար յեղափոխական կազմակերպութիւնները, առանց պետութեանց ձեռնարկը խանգարելու պատճառ տալու, իրենք իրենց շարքերը ներքնապէս սեղմելու և պատեհ առիթին ու ժեզ կերպով իրենց ազգայնական նպատակը իրականացնելու կ'աշխատին: և այս աշխատութիւնը միայն յեղափոխական տարրերը չեն որ ի գործ կը դնեն, այլ ամբողջ պոլսկար ազգը, առանց կուսակցական խնդրութեան, իր դիրքի տէր և զարգացեալ զաւակներուն միջոցաւ: Երեկ «Ներքին կազմակերպութեան» և Ձեռնէքեան երկու յեղափոխական կուսակցութիւններու միացումը տեղի ունեցաւ, այսօր ալ Սօֆիայի Մակեդոնական համաժողովին գերազանցապէս ազգասիրական գումարում մը տեղի կ'ունենայ:

Մեր երիտասարդութեան ու մտաւորականներու լիակաճ մեկուսացած և իր կճեպին մէջ քաշուած ուղալի վիճակը նկատի առնելով, երբ մեր աչքերուն առջև կը տեսնենք պոլսկար մը տաւորականներու անվատ գոր-

ծունէութիւնը, յակամայս կը խոստովանինք թէ՛ իրօք անոնք մեզմէ շատ աւելի ազատութեան արժանի ազգ մըն են եղեր:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷ

Ռուսիոյ ներքին ընդհանուր վիճակը սպառնալից է: Հին այսօր ոչ ոք ապահով է իր վաղուան կեանքին եւ հարստութեանը վրայ: Չարէն, նախարարապետէն սկսած ամենատոբին պաշտօնեան, սեփականատէրը եւ գործաւորը, յետադիմականը ու յեղափոխականը բոլորն ալ սպառնալիքի տակ են: Գիրար չէզոքացնող երեք ուժեր, յետադիմական, կառավարական եւ յեղափոխական, ամբողջ երկրը անիշխանութեան մատնած են: Բայց այս երեք ուժերուն էն լաւ տալիսը թիւննիւրով օժտուածը կառավարական ուժն է, որուն գլուխը կը գտնուի նախարարապետ Վիթէն, որ իրեն զօրավիզ ունի Նիքոլա Չարը:

Այս պետական խեղճ մարդը, իր բոլոր բարի տրամադրութիւններուն հակառակ, այսօր կը հալածուի թէ՛ յետադիմականներէ եւ թէ յեղափոխական ու ընկերակազմներէ: Յետադիմականները Վիթէն պատասխանատու կը բռնեն ներկայ անիշխանական վիճակին: Իրենց փառքը այն է թէ, եթէ Վիթէն Չարէն հոկտ. 17 ի մանիֆէստը խաճ ու հրատարակած չլըզար, խոռվարարները այս աստիճան համարձակութիւն չպիտի ստանային եւ կառավարութեան ուժը չխառնուած չպիտի ըլլար զանոնք զսպելու համար: Եւ յետադիմականները, որոնց զբաղումը կը գտնուի Չարին ազգականներէն մէկ քանի իշխաններ եւ նախկին նախարարներ, կառավարչներ տղեցեկ կրօնաւորներ եւ զօրավարներ, Վիթէնի գէմ այդ ամբաստանութիւնը ընելով կը ջանան զանի հեռացնել նախարարութենէ եւ զիկտատորութիւն մը հաստատել ժողովուրդի ազատական շարժումը զսպելու եւ եթէ կ'ընել է, արմատախիլ ընելու նպատակաւ: Նիքոլա Չարը պէտք է ըսել թէ, բաւական տոկոս կամքով մը կը մաքառի զինք չըջապատող յետադիմական իշխանազուններու եւ պալատականներու պընդուններուն դէմ, ու չը հաճիր յետադիմական չոր քայլ մը առնել, սրչափ որ ալ յեղափոխականներու ընթացքը անհանդուրժելի կը գտնէ:

Շատ յատկանշական է անցեալ օր Չարին տուած պատասխանը իրեն

ներկայացող այն պատուիրակութեանց որոնք ամբողջ Ռուսիոյ յետադիմական դասակարգներուն բաղձանքները կարտայայտէին զատ զատ ուղերձներով: Եւ որոնք միապետութիւնը վտանգի տակ ցոյց տալով, վրաձայնութեամբ կառավարչէին ամենախիստ միջոցներ ձեռք առնելու անգիթօրէն պատեւը զգոյշները, ու ճզմել յեղափոխական տարրերը: Չարը անոնց սա իմաստով պատասխանեց. «Ես երբեք չեմ կասկածիր որ Ռուսիոյ անձնուէր գաւակները հակառակին հոկտ. 17 ին հրատարակած հրովարտակոյս ցոյց տրուած ուղիքին Այդ էրովարտակոյս իմ ամփոփումը մտածելու արտայայտութիւնն է որ երբեք փոփոխում չպիտի կրէ: Արդարութեամբ եւ խստութեամբ պէտք է կարգը վերահաստատել, որպէսզի կարելի ըլլայ բարենորոգումները գործադրել: Այս նպատակին հասնելու համար ամէն քաղաքացի պէտք է օգնէ կառավարութեան եւ կայսերոյ: Չարին այս պատասխանը չնորհաքով ապտակ մըն էր յետադիմական պետերու անպատկառ երեսին եւ հանդիսաւոր նորագոյն խոստում մը խաղաղասէր ժողովուրդին ու չափաւոր ազատականներուն: Որոնք այլեւս պէտք է վստահ ըլլան թէ Նիքոլա Չարը անկեղծօրէն կը բաղձայ Ռուսիան սահմանադրութեամբ օժտել, անոնց ծայրայեղ տարրերուն չափաքանց պահանջներուն զոհանքով տալու:

Անցեալ ամսոյ մէջ վերջին անգամ Մոսկուա գումարուող Ձեմըսթվոնեւու եւ քաղաքապետութեանց ներկայացուցիչներու Համաժողովին կողմէ Մ. Վիթէնի ներկայացող պատուիրակութիւնը որոշ պատասխան մը չտանալուն համար, ներքին զգալով, անցեալ օր Բեդերսպոլսկին Մոսկուա վերադարձաւ, սակայն Մ. Վիթէն աւելի չը յապաղեց որ պատասխանը եւ Ձեմըսթվոնեւու համաժողովին դիւանի նախագահի ուղղեալ պաշտօնադրով մը սապէս ըսաւ:

« Իմ առաջին պարտականութիւնս է վեհապետին բաղձանքները իրականացնել ըստ Անոր հոկտ. 17 ի հրովարտակոյս: Այս հրովարտակոյս գծած սահմաններէն անդին անցնող առաջարկներ նկատի չեն առնուիր: Նոյնպէս Տուսային իրաւասութեանց զբաղող կարեւոր ձեռնարկներ մշտական կերպով գործադրութեան չեն դրուել: Ո՛րոշեալ որ կայսերութեան Տուսան (երեսփոխանական ժողովը) գումարուի: Շարունակական խոռվութիւններու, սպասարկութիւններու եւ կայսրու-

թեան ամբողջութեանը գէտ խլրտում-
ներու պատճառաւ, երբեմն նահանգ-
ներու մէջ կառավարութիւնը կը ստի-
պուի արտակարգ միջոցներ ձեռք առ-
նել ։»

Ռուս նախարարապետին այս նո-
րագոյն պատասխանն ալ Սահմանադր-
ութեան գործադրութիւն մասին Զարին
եւ իր կամքի վճռականութիւնը ցոյց
կուտայ ։ Բայց խոտովարար տարրե-
րը չեն ձգեր որ կառավարութիւնը
խաղաղօրէն առաջ տանի Տուժայի
անդամոց ընտրութեան եւ հաւաքման
համարապատասխանութիւնները ։

Գործաւորաց Յանձնախումբի նա-
խագահ Խրուսթալէվի ձերբակալու-
թիւնը յեղափոխական գրգռիչներու
ձեռք նոր զէնք մեղաւ Վիթէի
անկեղծութիւնը կասկածի տակ դը-
նելու համար ։ Այդ օրէն ի վր գոր-
ծաւորական, ընկերավարական ու յե-
ղափոխական գումարումներու մե-
թերթերու մէջ կծու յարձակումներ
կըլլան Վիթէի վրայ, չեն քաշուի
յայտարարելու թէ Վիթէն խորե-
բայ մըն է, որ կուզէ ժողովուրդը
խաբել եւ խոտաացուած Սահմանա-
գրութիւնը իսկ չը գործադրել եւ այլն ։
Եւ որպէսզի կառավարութիւնը խիստ
նեղ վիճակի մէջ զննէ եւ անիշխա-
նութիւնը կատարեալ ըլլայ, Գործա-
ւորներու Խորհուրդը, Գիւղացիներու
ազգ. Միութեան Կեդր. Գումթէն,
Սօսթալ—դէմոկրատ գործաւորներու
յանձնախումբը եւ Կեդր. Գումթէն,
նաեւ Բոլոյնիացի ընկերավարականներու
Կեդր. Գումթէն ուղղեցին ժողովուր-
դին յայտարարութիւն մը պատու իրե-
րով որ մերժեն բոլոր տուրքերու վը-
ճարութեւնը կառավարութեան, թոչ-կ-
ները եւ ուրիշ առնելիքներ պահան-
ջեն ոսկի դրամով, եւ պետական դրա-
մատունը ու ինչպէս իրենց Սնտուկը
ձգուած աւանդները ետ առնեն ։
Նոյնպէս յեղափոխական եւ ընկեր-
վարական պետերը ի մի հաւաքուելով,
որոշած են կառավարութեան հանդէմ
կոտորելու համար ընդհանուր ապս-
տամբութիւն հանել եւ այս նպա-
տակաւ յայտարարութիւններ ցրուած
են գործաւորները եւ ժողովուրդը
զէն ի ձեռքն ապստամբութիւն հը-
քաւելիլով ։

ՍՈՒՐԵԱՆԸ ՍՊԱՆՍԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Արտատպուած «ԱՐԵՆԻԵԼԻ»-էն)

[Ետ. նախորդ թիւէն]

Ամբաստանիչ ատենանի տեղեկագրէն
եւ կարգացուեցաւ նաեւ Պոլսոյ վե-
րաքննիչ ատենանի ընդհ. դատախա-
զութեան 1321 Հոկտ. 22 թուականի
ամբաստանագիրը, որ մանրամասնօ-
րէն պարզելէ ետք վերոյիշեալ անձե-
րուն անխնայ մտադրութիւնը, եղեռ-
նական արարքը, եւ մասնակցութեան
աստիճանը, զանոնք կ'ամբաստանէ
իբր հեղինակը նոյն ոճրապարտ ա-
րարքին ։

ԸՆԻ. ԴԱՏԱՆԱԶԻՆ ՉԱՌԸ

Ընդհանուր դատախազ Նէմէշտտին
պէյ խիստ պերճաբոս կերպով պար-
զեց զատը երկուքն ժամէ աւելի
տեղող ատենարանութեան մը մէջ ։
Ն. Պլեխովսկիին ըսաւ թէ Յուլիո
Յի դրաթ օրուան եղեռնական փոր-

Ահա այս է օրուան զիճակը Ռուսիոյ.
Յետադիմականները կը սպառնան կա-
ռավարութեան, Վիթէն տապալելու
դիկտատորութիւն հրատարակելով
Սահմանադրութեան գործադրութիւն
արգելք ըլլալ ։

Կառավարութիւնը կը սպառնայ գոր-
ծախոյններուն եւ յեղափոխականնե-
րուն եմէ հանդարտ չը կենան խիստ
միջոցներ ձեռք առնել ։

Յեղափոխականները եւ գործաւոր-
ները կը սպառնան կառավարութեան
ընդհանուր ապստամբութիւն յարու-
ցանել ։

Վերջապէս Զամեն կողմէ սպառնա-
լիք եւ ամենը սարսափի տակ, ոչ
օր գիտէ թէ վաղը ինչ վիճակի մէջ
պիտի գտնուի եւ ինչ պիտի ըլլայ
Ռուսիոյ կացութիւնը ։

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԿՈՏՈՐԱԾՈՒ ԵՐԿԻԻՂ

Բաւական ժամանակէ ի վեր հոս
եւ Գահիրէի մէջ, արաբ շարժման մը
փոփոխութիւն կը լսուէին. հաւատա-
ցողներ կային թէ Թաւթաի մէջ քը-
խտոնեաներու կոտորած եղեր էր,
թէ Տամիէղի մէջ իսլամաց կրօ-
նական շարժումը լուրջ կերպարանք
տոնը է, եւ թէ Ապպաիէի մէջ հա-
կաբխտոնեական ցոյցեր տեղի ու-
նեցեր են, եւ, եւ, եւ ։ Ուրիշներ կը
պնդէին թէ, Սուլթան Համիտ, գահա-
ցում չգտնելով պղատնական ըս-
պանալիքներէ, ինքն ալ իր կար-
գին ցոյցի սկսել է, եւ եղեպտոս
զրկել է առ նուազն հինգ հարիւր
համալսական քարոզիչ, որոնց
պաշտօն սրուած պիտի ըլլար կը-
րօնական պատերազմ յայտարարել ։

Ու փոփոխութիւնը տակաւ լրագրու-
թեան ալ փոխանցուեցան. ժողովուր-
դը մանաւանդ եւրոպական հասա-
րակութիւնը, 1882 ի կոտորածը մը-
տաբերելով, սկսաւ զինուիլ, եւ մեզ
կը հաւատեն թէ Մէնչիայի հրապա-
րակին վրայ գտնուող զինավաճառի
խանութը իր մթերքը սպառած է ար-
կէն ։ Գահիրէի խառնական Իւժիօր-

նալի թերթն ալ, արաբական շարժ-
ման նուիրուած խմբագրականի մը
մէջ կըսէ թէ Գահիրէի զինավա-
ճառներն ալ մէկ քանի օրէն սպա-
ռիցին իրենց մթերքը ։

Արդ, ինչ բան ծնունդ տուաւ
այս անպատեհ իրարանցումին ։
Ակզնեպատաճող հիւժուար է որոշել ։
Ժողովուրդային յուզումները երբեմն
թնդանօրինակէն, իսկ շատ յաճախ ալ
պարզ ժեսթէ մը յառաջ կուգան ։
Բայց սա յայտնի է որ, վերջերս
տեղի ունեցած կարգ մը իրական
ղէպքեր զոնէ նրահարեցին ժողովր-
դային խաւերը ։ Երեք չորս կերակի
առաջ, Գահիրէի ամերիկեան միսիօ
խարհերուն, եւ մոլեռանդ ժամէտա-
կաններուն միջեւ բաղբում մը ան-
ղի ունեցած էր, որ զօրէց լուրջ
հետեւեալներ ունենար, եթէ ոստի-
կանութիւնը ժամանակին չի միջա-
մտէր. Լօրտ Գրոմբր հարկ տեսաւ
գործի խառնուիլ եւ երկու կող-
մերուն ալ պէտք կ'ըսէ ազգաբա-
րութիւնները ըսաւ ։ Այս միջադէպին
յաջորդեց զուգարկութիւն մը, որ ոչ
նուազ նպատեց միտքերու գրգռե-
ման ։ Գահիրէ, Մուսքիի Վելո պէյի,
եւ եղպէի խանութպանները կորո-
չեն ուրիշներու պէս, կիրակի օրե-
րը խանութ չը բանալ ։ . . . առ ի
բարեպաշտութիւն, ու այս օրոշումը
կը գործադրուէ անանկ ատեն մը,
երբ ժողովուրդը սովորաբար բաց
խանութները փակ տեսնելով կը
մեկնէ . . . առ անիւ Վրայ հասաւ
վից մարտանաւէ բաղկացած անգլի-
ական նաւաբաժնի մը՝ եգիպտական
ջուրերուն մէջ յաճիլը. յիշեալ նաւա-
բաժնիը հիմայ Աղէքսանդրիոյ նաւա-
հանգիստը մտած է. եւ, ըստ իյ
ձիօրնալի ի, իր մեծագոյն թնդա-
նօթները եւ բաւականաչափ զորքցա-
տաք հանած է ։ Այս շատ թելադրիչ
լուրերէ զատ թէ՛ Գահիրէ եւ թէ
Աղէքսանդրիոյ մէջ անհատական
ընդհանրութիւնը եղան, բնիկներու
եւ եւրոպացիներու միջեւ. ու բա-
ժակը լեցուեցաւ. քրիստոնէից զէմ
իսլամական շարժում մը օր օրի հա-
ւանականութեանց կարգը դատուե-
լաւ, եւ դեռ այսօր, տեղական լրա-
գրութիւնն ու ժողովուրդը հետա-

քրքրութեամբ կը դադի այս խնդ-
րով ։ Մուսթաֆա բաշա Գամէլ, ծա-
նօթ համալսական պետը եւ հաւա-
պարակագիրը ի պաշտօնէ խօսե-
ցաւ, եւ վստահութեամբ յայտարարեց
թէ, որքան որ իսլամներուն կրօնա-
կան զգացումը վերաւորուած է այս
պահուս, քայց իսլամական շարժու-
մի մը վրայ չկայ ։ Եւ սակայն ժո-
ղովուրդը այս ապահովութեամբ չը
հանդարտեցաւ. ու մասնեց թէ
այս խօսքերն ընողը նոյն այն մար-
դէն է, որ մէկ երկու ամիս առաջ
բարկածաթ յօդուածով մը Անգլիա-
ցիները Եգիպտոսէն դուրս հանել
կուզէր, եւ այս ամենակոտորեոր
ձեռնարկին համար պէտք տեսած էր
Գերմանական մամուլին գրկը ապ-
աստանիլ. թէպէտ, Գերման թերթ մը
Յօսվերց կը պատասխանէ թէ «Ան-
գլիացիք Եգիպտոսը յաւաքոյն վար-
չութեամբ մը կը կառավարեն, եւ թէ
Գերմանիա երբեք յաւակնութիւններ
չունի այդ երկրին վրայ» ։

Աղէքսանդրիոյ օտար մամուլին
լատաեղեակ թերթերէն մին Էմիթ-
շըֆ Կազեք ալ հարկ համարեց զբա-
ղիլ օրուան հրատապ թնդումը ։
այս կիսապաշտօնական թերթը, ծի-
ծաղելով հանդերձ յայտնուած վա-
խերուն վրայ, յանցանքը կը վերա-
գրէ ամենամեծ մասամբ Յօյներուն,
ոյնք իրենց ծանօթ դիւրաբորքը
ընաւորութեամբ, ժողովուրդին մէջ
տարածեցին կոտորածի լուրեր ։ Ու
Էմիթշըֆ Կազեք, շատ լրջօէն յիշա-
տակելով Յօյներուն առեւտրական
ձեռնբեկցութիւնը եւ յանդիմութեա-
նը, կոչում կընէ անոնց քաղաքա-
կան արիւստրութեան, հոմբական
սա աղղով. «Արագ ելէք, բարեկամ-
ներս, յիշեցէք ձեր հին քաղութիւն-
ները» ։ Մեր յարկիւն՝ պաշտօնակից,
«Էմիթշըֆ Կազէթ»-ի զիտելը կուտանք
թէ Էմիթշըֆ չ'ոչ միայն կորնցուցած
են իրենց նախահայց արիւթիւնը,
այլ եւ իրենց յիշողութիւնը քանի որ,
եթէ ստոյգ է թէ համալսական
ցոյցի մը հրամանը Սըլտըզէն պիտի
գ յ, ուրեմն վախնալու ո եւ է պատ-
ճառ չունին Յօյները, որոնք այս
պահուս, բովանդակ քրիտոնեայ աշ-
խարհին մէջ, մէկ հատիկ սիբիւրներն

իրենց վկայութիւններն ու խոտո-
ւանութիւններն ու արձանագրութեան
եւ սպիտիկ անձնակէ եւ օչ մէկը կը-
ցաւ ստոյգ ապացոյց մը եւ անգի-
կութիւն մը տայ եղեռնական արար-
քին նկատմամբ ։ Ուստի ձեռնարկու-
եցաւ քննութիւն մը կատարել զէպ-
քին անգլոյն վրայ, ուր բանկուծին
հետեւանքով փոք մը պոյաջաճէր ։
որուն շուրջը երկաթի կտորներ եւ
կառքի բեկորներ կը տղամարտի-
կաբ վրայ՝ երբորդ աստիճանի քըն-
նութեան մը ձեռնարկուեցաւ պոյ-
թումէն քանդուած եւ վնասուած կառ-
քերուն եւ անոնց տէրերուն նկատ-
մամբ ։ Հաստատուեցաւ թէ եղեռ-
նական զէպքին ատեն յաջաբաժնու-
կառքերը փոխադրուած են Դ. թա-
ղապետութեան յատուկ Պէշիկմաշի
նաւամատոցին մօտ գտնուած թա-
ղապետական աւազի մթերանոցը ։
անմիջապէս հարցաքննիչ մարմինը իր
հետ առնելով կատապաններու արհես-
տապետը, ինչպէս նաեւ կառք նորո-
գող եւ իննդներէ կազմուած մասնա-
զէտներու խումբ մը, այն տեղ գնաց
եւ կատարուած մանրազննին քննու-
թեան հասկցուեցաւ թէ պապիւն

են՝ Սուլթանին, իրենց թրքասիրական ծառայութիւններով:

Մեր կողմէ կոչ մը ընել՝ Եգիպտոսի հայ հասարակութեան, որպէսզի ունենան վախ չանուցանէ իր սրտին մէջ ու անգլիական զորքին առկա, աւելորդ յանձնարարութիւն մը կը նկատենք: Զանգուածային կոտորածներու պատժութիւն սեւակարմիր էջերը ցոյց կուտան թէ, առանց կառավարական բարձր շրջանակներու հաւանութեան, ոչ մէկ երկիր կենթարկուի ջարդի ու աւարտութեան: Ու անգլիական կառավարութեան վրայ ամենադոյզն կասկած ունենալը առնուազն անմիտ տպերախառնութիւն պիտի ըլլայ: Արդէն ծանուցուեցաւ թէ եգիպտական բանակը հրաման ստացած է կազմ ու պատրաստ մնալու, թէ՛ անգլիացի ապստամբ իրենց պաշտօնին գլուխը անցան, եւ թէ նաւահանգիստին մէջ խառնուող վեց անգլիական մարտանոսները ցամաք հանեցին մեծաքանակ սպանութիւնները ու նոյն իսկ ընկալելէ թնգանութիւն, որոնք կը գործածուին փողոցները թնգանութիւններու: Բաց աստի, էմիրը իր Կազիբ կը ծանուցանէ թէ կառավարութիւնը ազգայնացեալ Մուսթաֆա բաշա Բալթի, որ եթէ շարունակէ արարները զրգոյն, իր թերթը պիտի խափանուի: Այս պատրաստութիւններն լաւագոյն ազգաբարձրութիւններն են ուղղուած անոնց՝ որոնք հակաքրիստոնէական շարժումներ կը գաւազդեն:

«ԱԶԱՏ-ԲԵՄ»

ՅՈՒԶԻՉ ԼՈՒՐԵՐ

Պոլսէն գեկտ. 15 թիւով հետեւեալը հետագրած են թանկ:

«Տփղիսէն հեռագիր մը կ'ըմբռնէ թէ վերջին ժամանակներս ծանր խռովութիւններ պատահեցան Հայոց եւ թաթարաց միջեւ:

«Ռուս կառավարութիւնը կ'ամբաստանուի թէ Հայոց զէնք բաժնած է, որոնք խառնուելու տուները մտած

մէն անմիջապէս ետք 16 կառքեր իրենց կենդանիներով փնջուած են: Այս 16 կառքերուն աւելորդ եւ զանազան փորձերը որոնք ըլլալը ճշդութեամբ էր: Իսկ 17-րդ կառքը միւս 16-ին բաղդատմամբ ալ աւելի ջարդաւիշակ եղած էր եւ փայտեայ մասը կառքերէն ալ չէր անջատուած: Նիւնները քառակուսի շրջապատուած էին: Այս կառքին տէրը որոշուած չէր եւ ունէր մէկը չէր ներկայացած իբրեւ տէրը այդ կառքին: Մասնագէտները անմիջապէս քննութիւնէ մը անցուցին կառքին երկաթեայ բեկորները եւ հասկցուեցաւ թէ այս կառքը ամիսէ մը ի վեր միայն սկսած է գործածուիլ եւ թէ դեռ նոր գնուած է գործատունէն: Ուստի այս կառքին անիւին քաւիկ վրայ դրոշմուած մարքան ու թիւը հանուելով տեսնուեցաւ որ վիճինային մէջ կառք չի ողջ նախկին փոխէր գործարանին անունը ու 11,123 թիւը կը կրէ: Այս մնացորդ մարքան եւ թիւը, բաղդատուելու համար պայթուածն գոյացած փոսին մէջն ու շուրջը գտնուած կառքի երկաթեայ բեկորներուն հետ, Հարցաքննիչ մարմինը կառքի մասնագէտներուն հետ

եւ բոլոր բնակիչները կոտորած են: Բեկորապուրկի թուրք զինուորը հրահանգ ստացաւ այս գործերուն վրայ Ռուսիոյ ուշադրութիւնը հրաւիրելու:»

Այս լուրը Պոլսէն հաւանականապէս զուտ թրքական աղբիւրէ տրուած ըլլալով, եթէ ոչ բոլորովին սուտ, գոնէ խեղաթիւրուած պէտք է ըլլայ: Հայերը զէնք ստանալուն (1) համար մահմետականներու տուները մտնեն եւ բոլոր բնակիչները կոտորեն, չէ կարելի: Եւ յայտնի ընդհանրութիւնը միայն թուրքերու եւ թաթարներու վերապահեայ է դարերէ ի վեր:

Բեկորապուրկէն գեկտ. 15-ին կը հեռագրեն էյթփիւնին ճամբով հետեւեալ լուրերը:

«Կիւմացուի թէ Տրակիոյն հրապարակաւ մը ըմբոստացած է Բաթի-ժորսքի մէջ (Կովկաս):»

Տփղիսի մէջ կոտորածը կը շարունակուի:

«Պատեմ-Գալ» անունով Լոյս ընկերութեան չոգենալը Օսեսայէն 300 փախստականներ բերած է Քէօթէնէ: Անոնք կը պատմեն թէ պատրաստ վիճակի մէջ կը գտնուին յոյսով մեկնելու: Շատ մը նաւեր կը ըսպանեն Օսեսայի առջեւ ի հարկին հիւպատոսները փախցնելու համար քանի որ վտանգի տակ կը գտնուին:»

Պալիկեան նահանգներու մէջ ապստամբութիւնը ընդհանուր եղած ըլլալ կը թուի: Հաղորդակցութիւնները կտրուած են եւ երկաթուղիին վրայ ապստամբները կը հոկեն որ պէտքի հոն զօրք փոխադրելու արգելք ըլլան:

Մանչուրիայէ զօրավար Լինէվիչը սա հեռագիրը ստեւած է Բեկորսպուրկ:

«Զեմ կրնար զսպել բանակին մէջ աճող յեղափոխական բրթականաբ: Զինքի տակ գտնուող զօրքին կէսը արդէն ըմբոստացած է: Պահան

դէպքին վայրը գնաց: Տեղի ունեցած քննութեամբ տեսնուեցաւ որ փոսին մէջ գտնուած կառքին լծակին վրայէ թիւը նոյնն է կառքին անիւին քաւիկ վրայի թիւին: Եւ վտանգի կառքին բեկորներն ու մթերանոցէն բերուած կառքին բեկորները կատարելապէս իրարու նման էին: Այն աստի գրուեցաւ վիճինայի օսմ: Դեռ պահատան թէ այս կառքը երբ, որո՞ւ ձեռքով եւ ինչպէս յանձնարարուած է վիճինայի նոյն գործարանին: Միւս կողմէ, գրուեցաւ Մաքսային վերադարձութեան որ զրկէ յիշեալ կառքին յատուկ քօնէսը մանր, մանիֆէսթօն, մթերանոցի տետրակներուն արձանագրութիւնները, հասկնալու համար որ նոյն կառքը մաքսատունէն ինչպէս հանուած է:

Իսկ պայթուցիկ նիւթին ինչ նիւթերէ կազմուած ըլլալուն, ինչպէս պայթիւնը եւ զէպէն անմիջապէս յետոյ, հոն գոյացած փոսին շուրջը գտնուած եւ միջեւ հեռուները նետուած երկաթին բեկորներուն նըկատմամբ գիտական քննութիւն մը կատարելու պաշտօն յանձնուեցաւ:

տիները կը պահանջեն անմիջապէս իրենց հայրենիքը զրկուիլ եւ կը մերժեն թղթադրամ առնել: Ստիպողական հրահանգներ հետագրեցէք:»

4. Պոլիս 16 դեկտ.— Պալմուէն հեռագիր մը կ'ըմբռնէ թէ ծանր խռովութիւններ սեղի ունեցած են քաղաքին մէջ: Բոլոր փողոցները պատնէշներ կանգնուած են երէկուէն ի վեր: Զօրքը թնգանութ կը գործածէ: Բազմաթիւ սպաննուածներ կան, որոնց մէջ քանի մը թրքահպատակներ ալ կը գտնուեն:

Օսմանեան հիւպատոսը չոգենալը խնդրած է փախստականներ առնելու համար:

Միւսին վիճակը կը տիրէ Բօլոյ եւ թէ Գուլթարի մէջ: Եգիպտոսէ թուրքերը թաթարներէն կոտորուած է:

Տփղիս 21 դեկտ.— Շարաթ մը ի վեր ընդհարումներ տեղի կ'ունենան Հայոց եւ թաթարաց մէջ, Հայաստանի կ'ոստարիչը 500 զէնք բաժնած է քաղաքապահ կազմելու համար: Բանակը եւ փողովուրդը կը պահանջեն այս քաղաքապահ խումբի գլխաւորութիւնը առաջինները զայն գլխաւորութիւնը ձեռնարկեցին: Բազմաթիւ մեծ անհանգստութիւն կը տիրէ:

ԱԶԳԱՅԻՆ

Սուլթանը սպաննելու փորձին դատաւարութիւնը լմնցած ըլլալով, մահուան դատապարտուել են Թօրիս, 3 ներկայ հայեր եւ լապակայ ամբաստանաւորներէն տիկին Թօրիս, տիկին Ռիբա ու տիկին Ֆին եւ 3 հայեր: Ուրիշ 13 հայեր ալ, մեծաւ մասամբ լապակայ ցմահ բանտարկութեան

Մովսիսի նախարարութեան եւ թընդանթարանի վերատեսչութեան մասնագէտ պաշտօնեաներէ ոմանց: Այս մասնագէտներու ընդարձակ տեղեկագրին հասկցուեցաւ որ անոնք նախ սա կարեւոր խնդիրը լուծեցին թէ պայթուցիկ նիւթը հողին տակը գնդեղուած էր թէ մակերեսին վրայ: Իրենց քննութիւններով սա արդիւնքին յանգեցան, նկատելով որ զէպէն ժամանակ գոյացած փոսը հազիւ եօթուեցաւ սանդիմէթ խորութիւն ունի, որուն շրջապատը չեղ ըլլալէ աւելի, ուղղահայեացի մօտ է, եւ փոսին մէջ գտնուած երկաթի կտորներուն մէջ մասը հողին տակ ծածկուած է, ասոնց ամէնքն նկատողութեան առնելով հաստատեցին թէ պայթուածը գետնին տակէն չէր, այլ հողին մակերեսին վրայէն տեղի ունեցած էր: Ուսկէ զատ, բաղդատութեան զրուեցաւ նաեւ զէպէն վայրը զրտնուած կառքին լծակին եւ անվար կառքի մը լծակին զրբերը, եւ հաստատուեցաւ թէ լծակը ճնշուած էր վրայի կողմէն ուղղուած արտակարգ ուժի մը աղդեցութեամբ: հե-

դատապարտուած են: 3 հայեր 15 տարի բանտարկութեան եւ մի միայն 3 յոյներ եւ 3 հայեր անպարտ հռչակուած ու ազատ ձերգուած են:

— Պոլսոյ Գում Գաբուի շորս թաղերու Աղքատախնամը աղքատ ընտանիքներու ձմրան առթիւ օգնութիւն հասցնելու համար, ինչպէս ամէն տարի, այս տարի ալ նուիրահաւաքութեան ելլելու լուծած է, բայց կառավարութիւնը արգիլած է: Այս առթիւ պատրիարքը ստիպուել է պալատ դիմել որպէսզի արտօնութիւն առնէ աղքատներու համար դրամ հաւաքելու Աղքատախնամ ընկերութեան միջոցաւ:

— Ռօստոթոցիք խնդրած են Կեդր. վարչութեանէն որ առաջ. Տ. Վահրիճ վարդապետը հեռացնէ պաշտօնակ ընելով:

— Պուլկարաց էքզարքը Օրմանեան պատրիարքի բնակարանը գացած է անձամբ շնորհակալութիւն յայտնելու իր քրոջ մահուան առթիւ յայտնած ցաւակցութեան մասին:

— Գահրէի ազգ. վարժարանին շինութեանը համար ցարդ հանդանակուած է 3530 եգիպտոսի: Պօղոս բաշա Նուպար եւրոպացի ճարտարագէտներու մասնակցութեամբ կառուցուելիք վարժարանին յատկադրուել կը զբաղի:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«ԻՐԱԽՈՒՆԻՔ» ի վարչութիւնը յոռնէ կառնէ տպագրիլ հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այլ եւ այլ քարտեր, հաշուեցուցակներ, տոմսակներ, գրքոյկներ եւ այլն:

Ուրիշ քաղաքներէ ստացուած յանձնարարութիւնք կը գործադրուին փութով եւ մեծ խնամքով: Գրիները չափաւոր եւ դրամը կանխիկ:

Ռուսներէն հաւաքուած անօթի բեկորներէն հաստատուած է որ պայթուցիկ նիւթը մետաղեայ պահարանի մը մէջ գետեղուած եւ այնպէս բռնկուած է: Գիտական քննութեամբ հասկցուեցաւ նաեւ թէ անիւնապարտ ոճրագործը կառքին այնպիսի դիրք մը տուած է որ ճիշդ ու ճիշդ բարեւի պաշտօնական արարողութեան պահուն տեղի ունենայ իր գծիւնային նպատակը, ինչ որ կը ցուցնէ թէ այդ ոճրագործը այս արարքին ձեռնարկելէ առաջ զանազան փորձեր կատարած է եւ բռնկուածն անմիջապէս առաջ փախած է: Իսկ պայթուցիկ նիւթը կառքին մէջ գետեղուած է եւ անպէս մտցուած է բարձր վայրը եւ հոն բռնկուած:

(Շարունակելի)



ፆ ኮ ከ ሶ ቶ ኮ ሂ

[illegible]

Գարա տէնիզին ըուս սահիլէ-
րինտէ վուգու պուլան պու գա-
րըջըզլըզլարըն թիւրք սահիլէ-
րինտէ տախի սիյարէթ իթմէ-
սինտէն գօրգուլմադտա տոր :

ԲՈՒՄԻԱ

— Լիվոնի վերայէ թինին ասը
զատեքեանը տախիլէ նաղըրը
նա պիր մահգար թագտիմի իլ
քէնտի միլէթլիքէրինէ գար
չը թէզեիգաթըն՝վէ իտարէի աս
քէրինէին դալգասընը իտտա
իտէյորլար : Ձարա վէ վիթէյ
տախի պու մաալտա թէէկրա՞
լար վէրտիլէր : Լիվոնառա Յ
պին քիշիտէն գառաբ աս
պուլընտըղընը Նեովոէ. Վոնմիա
եագիյօր :

—Ասրլարըն 30 քէօշք եագ-
տըգլարը, վէ իշճի գոմխիսիւնը
բէյիսէ բին աէրտէսթ օլտըգլա-
րը , վէ պու սէպէպէ ումուճէն
թաթիլի մէշլուլիյէթէ գարար
վէրտիքլէրի Բէթէրսպուրկոտան
պիլաիբիլիշ տիր :

ԱՌՆ ԹԷԼԷԿՐԱՖԱՐ

Աթիւն 8 դեկտ.

Եւնի գապինէ թէչքիլ օլըն-
տը, Վիւքէլա ռէյիւիկ վէ հար-
պիյէ նազըրլըզը Մ. Խէօտօքիս
տէրէօհտէ իթտի :

Թուրիս 8 դեկտ.

Բարձրագույն կաթոն շիրտի մեծ-
տէ պիր զէնկին ըստ փամբլիւ-
սը նէզովնտէ պուլընիյոր , վէ
սակութէ իսիմ ալթընտա կիզլէն-
միչ տիր :

Թօքիօ 8 դեկտ.

Մարքիզ Սօկոճէ Եէնի զապրիւնի
 լէշքիւ ի թառի Ամիրալ Թօկ
 պահրիէ նազըրը ամիրալ Գամի-
 մուրա պահրիէ սէր դաման-
 տանը վէճմարէշալ Օեմաւ էր
 քեանը Հարպ քէյսի նասպ օ-
 լընարըր :

Աթմհայոյ 8 դէկտ.

Պիր թարափտան Եւփեմեան 86
պին աքբէր կէրի չալըրըլտըրըլ
ըէվայէթ օլընիյօր տիկէր թա-
րաֆաան իսէ Միրալայ պէյնի(Վ
Սիվաստան հարէքէթէ Մէր
սին իսքէլէսինեան՝վաքօրա րա-
գիպ օլաճաղը օէօլլէնիլիյօր ։


Երժէնի գրքերը լարւոյն հոնասըն-
տա նամականքը օլան Համիտէն
ալայը պու Միւրպայ Կէյնի
գօմանտասը ալթընտա տըր, իշ-
պու ալայըն Երժէնի գաղալարն-
տա պուլընմաուրնա գաւրը գօն-
սօլոսլար Է Բրօթէսթ իթմէթտ
տիրլէր ֆագաթ պու մէսէլէտե
տախի Գօնսօլոսլար միւլթմէֆիդ
տէկիլ տիրլէր Խէզըլըր Հա-
միտիյէ ալայըն կիթմէսի իլէույ-
կուհսըլըղլարըն պաշընա պի-
սէպէպի միւնտէֆի օլմուշ օլանադ
տըր :

Սթանպօլ 7 դեկտ.

Տիւն Բրէլէր ճիւղարընտաք
Բլովիք նամ քէօյիւն մուխթար
3 նէֆէր լոււմ գօիթալար իլ
կիտէր իքէն պիր պէօլինկ աս
քէրէ թէսատիւֆ իտէր : Լսքէր
էր « Վէսլիմ օլըն » տէմէլերին
տէ՝ լոււլար աթէշէ տավրանը
լար վէ նիհայէթ տէօրտիւ տա
խի էօլիւրէր :

Մէջքերու պէտլիւկին զապիթիւ-
նին չիւմի Բաշայա պիլտրոտի-
կի իւզիէ , վուրուան Բումլար
թիւրք ասքէրի ֆորմասընտա ը-
մըշլար : Չօգ տէֆալար ասքէր-
լէրին Սաքէթնիտա իշլէտիք-
լէրի զատտարիլդլարա թէպաիլ
Բումլար րահպէրիք իտէրլէր ի-
միշ : պու վուրուանլար տախի
օ՛ ճընտան ըմըշլար :

Աւստրիա վէ ըստ էլշիէրին
սօն տէֆա Պապը Ալիյէ վէրաիք-
լէրի նօթա իւզէրինէ, 15 կիւն-
տէն պէրու Ուաքէթսնիստա Ու-
լահարա գարշը զուլ ու հագա-
րէթ մէնն ու թաթիլ օլընմը
տոր :



ՏԻՔԻՇ ՄԱՔԻՆԱԼԱՐԸ

U.1.6U. 45 018012

Գատրնլարա, գոնսուրանքլարա վե
թեղլեթե մախսուս էնվաի տիգլի
մաքխալարը վառնա վե Բրավատիա մա-
նիֆաթուրա մաղաղալարըմըզտա մէվ-
նուս օլուդ, ֆիսանճա պաշտաթաթ-
տան 100 աէ 30 հոգսան սաթմազտա
օլտըղեմըզ կիպի, միւշլեթլեթե սու-
հուէթլ օլտաթ իւլիւն հաֆթատա 2-
ֆրանկ էօսալմէք շարթը իլէ վեթսիլ
տաթիլ օլմէք քաէդի :

Սախորդը մը դ մաքինալար գազան
սազաթ լանըրլար իսէ մայէ թիմիդս
պուլընան մաէիր մաքնիթմ Մ. Յով
հանէս Շիրինեան կիտուպ մէճանէ
թամար իսէր վէ անէմիլէթէ էյուրէթի
Դէզա էսկէ մաքինալար սաթըն ա
լըր վէ Թարաթա իսէրիզ :

Վերմէքտէն օլտըրմըրդ չու սոնհու-
լէխլէրտէն պիլ իսխիֆաւէ ալեա Վե-
ուճուզ պիլքէր ժաքինա սահրպի օլ-
մազ արզու իսէնլէրի էզ հէր ճինհէ-
խօչնուտ պըրազաճաղըմըզը վաւտ էյ-
լէրիք :

ՄԻՔԱՅԷԼ Ս. ԳԱՊԱՏԱՅԵԱՆ

(2/25 0710)

Պատրանդար Ն. 233

ᠡᠳᠦᠰᠦᠨᠡᠭᠦ

Գաղտնի էր պատարժմամբ թերթիկ
իւէ պատարժում հարանալարն էր հալ
ակ չեմէն իգթիգալարն օլաճաղընտան
խարխ լէ թաղէ չեմէն ալճաղ իսթի
նէնէր Վառնատա Տ. Յ. Ճանկիրեան
յան լէ Ռուսաճգատ Տ. Դ. Լիւսն Օղան.
Խառնը պաղար տիւքանընա միք
ճաւթ իթմէր ալիքէր :

Одговорникъ А. Курбетиянъ
печата въ Д. Тодоровъ и С-но—Варна

